

Գ. ԳԱՐԵԳՈՆՅԱՆ

ՇԱՂԿԱՊԻ ԵՎ ԴԵՐԱՆՎԱՆ ԽՈՍՔԻ ՄԱՍԱՅԻՆ ՀԱՐԱՐԵՐԱԿՑՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԻ ՇՈՒՐՋԸ

Ինչպես գիտենք, արդի հայերենի շաղկապական համակարգում, բացի, այսպես կոչված, բուն շաղկապներից, այսինքն բացի միմիայն որպես շաղկապ կիրառվող բառերից, ղգալի տո՛ւոս են կազմում նաև շաղկապական այն բառերը, որոնք, ունենալով միաժամանակ դերանվան, մակբայի կամ այլ խոսքի մասերի արժեքներ և կիրառություններ, հանդես են գալիս նաև որպես շաղկապներ։ Այս կարգի բառերը հայ քերականության պատմության մեջ հատուկ ուսումնասիրության առարկա չեն դարձել։ Ներկա հոդվածի նպատակն է ընդհանուր գծերով լուսաբանել շաղկապների ու դերանվանների հարաբերակցության հարցերը։ Այս խնդրի լուծմանը մեծապես կնպաստեր նաև զրաբարի և միշին հայերենի ընձեռած տվյալների օգտագործումը։ Սակայն դա մեր նպատակից դուրս է և կարոտ հատուկ ուսումնասիրության, որը հնարավոր չէ կատարել սույն հոդվածում։

Անժխտելի է այն հանգամանքը, որ շաղկապների օգտագործման տեսակետից լեզվի ոչ բոլոր շրջաններն են հավասար պատկեր ներկայացնում։ Լեզվի զարգացման վաղ շրջաններում այդ լեզվով խոսող ժողովրդի ընդհանուր զարգացման մակարդակին համապատասխանում է նրա լեզվական մակարդակը։ Այդ շրջանում, պարզ է, բարդ նախադասությունները չեն ներկայացրել այժմյան վիճակը։ Հետագայում, մարդկային հասարակության զարգացման և աշխարհըմբռնման ավելի բարձր մակարդակի վրա կանգնած լինելու պատճառով մեծ զարկ է ստանում բարդ նախադասությունների զարգացումը՝ որպես արդյունք աշխարհը ամբողջ բազմակողմա-

նիության մեջ ճանաչելու մարդկային մտքի տրոհող պահանջի՝ Այնուհետև, գրականության հետագա աճն ու զարգացումը էլ ավելի հրամայաբար են առաջ քաշում բարդ նախադասությունների և նրանց կապակցության միջոցների օգտագործման անհրաժեշտությունը: Այդ շրջանում նոր ուժով են ծավալվում ու ձևավորվում ստորադասական կապակցությունները բարդ նախադասություններում, որպես համադասությունից հետո հանդես եկած, բայց լեզվի համար մեծ նշանակություն ունեցող նվաճում:

Համադասական և ստորադասական բարդ նախադասությունների աննախընթաց վերելքը գրականության զարգացման հետ զուգընթաց իր հետ բերում է նաև շաղկապական միջոցների զարգացման ու մշակման անհետաձգելի պահանջ: Իհարկե, մենք չենք պնդում, որ նախքան գրականությամբ արձանագրվելը լեզուն չի ունեցել նման կապակցության միջոցներ, սակայն դրանք չեն ներկայացրել բնավ այն պատկերը, ինչ որ հետագայում պիտի ներկայացնեին: Ինչպես ասել ենք մեր նպատակը չէ զբաղվել այստեղ այս հարցի մանրամասն քննությամբ և ցույց տալ, թե ի՞նչ ձևով և ի՞նչ խոսքի մասերից են կազմվել շաղկապները, սակայն ցանկանում ենք մի երկու խոսքով ցույց տալ այդ պրոցեսը, մանավանդ որ դա կապվում է շաղկապի և այլ խոսքի մասերի հարաբերակցության հարցին:

Այսպես ուրեմն, նախադասության համազոր անդամների և բարդ նախադասությունների բաղադրիչ մասերի միջև որոշակի իմաստային կապեր ստեղծելու նպատակով լեզուն առանձնացրել է որոշ բառեր, որոնք, իրենց բնույթից ելնելով, ի վիճակի են եղել այդ դերը կատարել: Սկզբում նրանք, լինելով նյութական բովանդակություն ունեցող խոսքի մասեր, հանդես են եկել որպես նախադասության անդամներ, գտնվելով անշուշտ նախադասության եզրերում: Այնուհետև այդ բառերը նման կիրառությունների մեջ վերափոխվելով նման ենթարկվելով, սկսում են նշել նաև նախադասության անդամների և նախադասությունների միջև եղած շարահյուսական կապեր, դեռ այդ շրջանում ուժեղ կերպով շեշտված իմաստային երանգներով՝ միաժամանակ հանդես գալով որպես նախադասության ինքնուրույն անդամներ: Աստիճանաբար նրանց նյութական բովանդակությունը կորչում է, որի պատճառով նրանք գաղարում են նախադասության անդամ լինելուց և ծառայում են սոսկ կապակցական նպատակների, դառնալով արդեն սպասարկու բառեր՝

* Հենց բարդ նախադասությունը արդյունք է քերականական ընդհանրացման, որին հնարավոր է հասնել նրա բաղադրիչ մասերի կոնկրետ բովանդակությունից վերանալով:

շաղկապներ: Մեծ մասամբ նման զարգացում են ապրել ստորադասական շաղկապները, որոնց ծագումաբանական նույնությունը նյութական բովանդակություն ունեցող բառերի հետ առերկրա է (օրինակ՝ դերանուններից են ծագել, ուր, երբ, այլ, այնքան, ինչպես, քանի, բայերից՝ կարծես (քե), առես (քե), մակբայներից՝ այլապես, ճեմեկարար և այլ շաղկապները): Անթիվ կարող է լինել լեզվի պատմության այս կամ այն շրջանից վերցրած այն օրինակների թիվը, որոնք ապացուցում են շաղկապի ծագումաբանական կապը այլ խոսքի մասերի հետ: Անշուշտ այդ շաղկապների մեծ մասը անցել է այն ուղին, որ նշեցինք մենք: Սակայն, քանի որ լեզվի զարգացումը, լեզվի կատարելագործումն ու մշակումը երբեք կանգ չեն առնում, ապա և կանգ չեն կարող առնել նաև բարդ նախադասությունների ու նրանց կապակցական միջոցների զարգացումն ու հետագա կատարելագործումը: Առաջ են գալիս նորանոր երևույթներ ու հարաբերություններ, որոնք իրենց արտահայտման պահանջն են զգում լեզվում, որի անմիջական հետևանքը լինում է այն, որ լեզուն հարստանում է կապակցական նորանոր հնարավորություններով:

Պարզ է սակայն, որ իր այդ պահանջները բավարարելու համար լեզուն չի կարող նոր շաղկապներ ստեղծել (իմա՝ նոր արմատներ): Արդի հայերենը նման պահանջները բավարարելու համար դիմում է այլ խոսքի մասերի օգնությանը, այսինքն օգտագործում է նրանց այն հնարավորությունները, որոնք իրենց արդեն դրսևորել են որպես հարմար միջոցներ: Այնպես որ, ինչպես ոչ մի լեզվում, այնպես էլ արդի հայերենում շաղկապի կայուն, մեկընդմիջ հաստատված համակարգ գոյություն չունի: Արդի հայերենում որոշ շաղկապներ հարաբերակցության մեջ են գտնվում այլ խոսքի մասերի հետ և հանգես են գալիս զուգահեռ գործածությանը: Շատ հաճախ նույնիսկ դժվար է որոշել, թե հիմնականում ի՞նչ խոսքի մաս է տվյալ բառը՝ մակբայ, դերանուն, եղանակավորող բառ, թե՞ շաղկապ. օրինակ՝ էլ, երբ, քեկուզ, մանավանդ և այլն: Մեզ թվում է, թե նման դեպքերում սխալ է հարցը դնել ուղղակիորեն այդ ձևով՝ դերանո՞ւն է, թե շաղկապ...: Մի բան պարզ է սակայն, որ ծագումաբանական տեսակետից դերանվանն ու մակբային է տրվում գերադասությունը: Այդ այն պատճառով, որ լեզվի զարգացման օրինաչափությունն է այն, որ նյութական բովանդակություն ունեցող խոսքի մասերից են առաջացել սպասարկու բառերը և ոչ թե հակառակը:

Սա շաղկապների և որոշ խոսքի մասերի համար այն յուրահատուկ երևույթն է, երբ մի բառ հավասարապես սպասարկում է մի քանի խոսքի մասերի (էլ բառը, օրինակ, վարող է հանդես գալ որ-

պես շաղկապ, մակբայ և եղանակավորող բառ, մինչև բառը՝ շաղկապ և կապ, և այլն)։ Այսպես ասած շաղկապը այն խոսքի մասն է, որ միշտ վերցնում է, բայց չի տալիս, կամ եթե տալիս է, ապա վերցրածն է տալիս։

Փամանակակից հայերենի շաղկապները հարարերակցում են խոսքի մասերից դերանունների, մակբայների, եղանակավորող բառերի և կապերի հետ։ Այստեղ քննության կառնվեն հարաբերակցության դեպքերը միայն առաջին խոսքի մասի, այսինքն դերանվան հետ։

ՇԱՂԿԱՊԻ ՀԱՐԱԲԵՐԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ԴԵՐԱՆՎԱՆ ՀԻՑ

Շաղկապները հարարերակցում են ճարտարական, անոռոշ և ցուցական դերանունների հետ։ Այդ հարաբերակցությունը լինում է երկու բնույթի՝ լիակատար և մասնակի։

Լիակատար ասելով պետք է հասկանալ հարաբերակցության այն դեպքերը, երբ այս կամ այն դերանունը կարող է հանդես դառնալ զուգահեռ արժեքով։

Օրինակ՝ «Նա ուսանող չէ, այլ աշակերտ» և «Նա այլ կարծիք ունի նրա մասին»։ Առաջին նախադասության մեջ այլ բառը գործածվում է որպես իսկական շաղկապական արժեքով հանդես եկող բառ, իսկ երկրորդ նախադասության մեջ արդեն որպես անոռոշ դերանուն, առանց շաղկապական իմաստի որևէ երանգի, նման բառերի նման տարբերակված գործածություններն են նկատի առնվում, երբ քերականները առաջ են քաշում խոսքի մասերի հարաբերակցության հարցը։ Այս երևույթը հատուկ է ոչ միայն շաղկապին, այլև մյուս խոսքի մասերին։ Սակայն եթե մակբայների, կապերի, ինչպես նաև շաղկապների համար բավական տարածված են հարաբերակցության այն դեպքերը, երբ այս կամ այն բառը ընդունվում է որպես թե այս և թե այն խոսքի մասին հարող, շնորհիվ զուգահեռ արժեքով հանդես գալու իրենց ձևով բերած հատկանիշների, ապա բոլորովին այլ բնույթի են հարաբերակցության այն դեպքերը, երբ գոյականն է ածականաբար, կամ ածականն է գոյականաբար կիրառվում։ Քան բառի թե՛ կապական և թե՛ շաղկապական կիրառությունները իրենց բնույթով նույնը չեն, ասենք, «քար» գոյականի ածականաբար ունեցած կիրառության հետ (բար սիրտ)։

Հարաբերակցությունը մասնակի պետք է համարել, երբ այս կամ այն դերանունը հանդես է գալիս շաղկապի խոսքի մասային միայն մեկ հատկանիշով՝ շարահյուսական հատկանիշով, այսինքն

և որ ծառայում է կապակցական նպատակների, առանց զրկվելու դե-
բանվանը հատուկ հատկանիշներից: Այդ դեպքում նա միաժամանակ
նախադասության անգամ է, մի բան, որ հատուկ չէ շաղկապին:
Այսպիսով, մասնակի հարաբերակցության դեպքում, դերանոմինե-
րը հանդես են գալիս դերանվանական և շաղկապական համատեղ
արժեքներով: Այս հոդվածում կքննարկվեն դերանունների մասնակի
և լիակատար բնույթ ունեցող հարաբերակցության դեպքերը շաղ-
կապի հետ:

ՇԱՂԿԱՊԻ ՀԱՐԱԲԵՐԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՐԱԲԵՐԱԿԱՆ ԴԵՐԱՆՈՒՆՆԵՐԻ ՀԵՏ

Հարաբերական դերանունները հանդես են գալիս երկրորդական
նախադասության մեջ որևէ պաշտոնով՝ ենթակա, խնդիր, տեղի պա-
րագա և այլն: Հետևաբար, այդ դերանունները, ծառայելով որպես
գործիք երկրորդական նախադասությունը գլխավորին ստորադա-
սելու, այսինքն կատարելով ստորադասական շաղկապների դերը,
չեն կորցնում իրենց նյութական բովանդակությունը, այլ ընդհակա-
ռակը, նյութական բովանդակության պատճառով երկրորդական նա-
խադասության մեջ նրանց ունեցած պաշտոնը էլ ավելի սերտ է
դարձնում գլխավորի կապը երկրորդականի հետ, քանի որ ականար-
կում են գլխավոր նախադասության մեջ եղած մի առարկա, հատ-
կանիչ, գործողություն և այլն, որի պատճառով էլ հարաբերակցու-
թյունը դերանունների հետ կրում է մասնակի բնույթ: Հաճախ էլ,
կապվելով գլխավորի ստորոգյալի հետ, հարաբերական այդ դերա-
նունները ավելի են մոտենում շաղկապներին, սակայն դարձյալ
նրանց նյութական բովանդակությունը թույլ չի տալիս շաղկապնե-
րին հատուկ կիրառությամբ հանդես գալ:

Այժմ բերենք համապատասխան օրինակներ՝

«Այդ զգուշությունը այն միտքն ուներ, որ ժողովուրդը չհար-
ձակվեր պարսից բերդապահ զորքերի վրա, ուր ինքնապաշտպա-
նության համար կարող էր արյունահեղություն սկսել և հարկ կլիներ
հայկական զորամաս հանել...» (ՄԳ, 1956 թ., 11, էջ 20): «Այնտեղ
եռում էր առևտրական կյանքը, ուր մի ծայրը Հնդկաստանն էր,
իրանական արևելքն ու Իրանը, մյուս ծայրը Բյուզանդիան ու Հռո-
մը» (ՄԳ, 1956 թ., 11, էջ 20): «Ընթերցված գործերի շուրջը տեղի
ունեցավ մտքերի փոխանակություն, ուրիշ մասնակցեցին Ս. Խա-
րազյանը, Ա. Շահինյանը... և ուրիշներ» (ԳԹ, 1956 թ., նոյ. 30, էջ
4), «Զեկուցողը կանգ առավ Լ. Զոհրաբյանի խաղացած մի շարք
դերերի վրա, որոնք մտել են սովետահայ թատրոնի պատմության

յեղ» (ԳԹ, 1956 թ., նոյ. 30, էջ 4)։ «Իրար հետեից եկեղեցու բակն
լին գալիս գյուղի բնակիչները, ուրնց դուրս էին բերել տներից
մտրակի հարվածների տակ» (ԳԹ, 1956 թ., նոյ. 30, էջ 4)։

«Թող պարգևատրվի նա, ով գերազանց առաջադիմություն և
վարք ունի»։

«Թող մոտենա նա, ում կարգադրել էին կատարել այդ հանձ-
նարարությունը»։

«Նա կատարեց այն, ինչ հայրն էր պատվիրել»։

Պատահեց այն, ինչից որ նա վախենում էր»։

Մենք չքերեցինք և հարկ էլ չկար բերելու ուր, ով, ինչ հարաբե-
րական դերանունների այլ հոլովներով ու թվերով ունեցած կիրա-
ռությունները. այսքանն էլ բավական է ցույց տալու համար, որ
նրանք այս նախադասություններում երկրորդականը կապակցելով
գլխավորին, միաժամանակ հանդես են գալիս որպես նախադասու-
թյան անդամ՝ հարաբերակցելով շաղկապների հետ միայն մասնա-
կի կերպով, նրանց խոսքի մասային հատկանիշի միայն կապակ-
ցական կողմով։

Երբեմն ով, ինչ, ինչպես նաև ուր դերանունների ուղիղ և թեք
ձևերի վրա ավելանում է ու թարմատարը, որը կարծես անորոշու-
թյան և զիջական լրացուցիչ երանգ է տալիս առանց այն էլ անո-
րոշ իմաստ ունեցող այդ հարաբերական դերանուններին։

Օրինակներ՝ «Ինչ ու ասես՝ կանեմ, Ում ու ասես՝ կկանչեմ,
Ուրնց ու թույլ ես տվել, ուղարկիր տուն»։

«Հեռու, մոտիկ ընկերներին,— աշխարհներին, արևներին,—

Հրանման հոգիներին»։

Թույլ նրանց, ում ու հոգին վառվում է վառ...» (ԵԶ, 39)։

Այս վերջին նախադասության մեջ ու թարմատարը վերաբերել
է անշուշտ «հոգի» բառին (ում հոգին ու...)։ Բայց սովորական տե-
ղափոխությամբ կապվելով ում-ի հետ, առաջացել է այդ ձևը (ում
ու), որը այնքան անորոշ երանգ չունի։

Այսպես, կան նաև ուր ու, ուրի ու, ուրնց ու, ումից ու, ին-
չից ու և այլ ձևեր։ Հետաքրքրական է այն հանգամանքը, որ այդ
թարմատարը գործածվում է միայն կապակցական դերով հանդես
եկող բառերի հետ, ինչպես օրինակ՝ երբ ու, ուր ու, թե ու, ճենց
օր, մանավանդ ու, այնպես ու, մինչև ու, ինչպես ու, քանի ու և
այլն։ Այս թարմատարի դերը այստեղ այն է, որ նա տվել է այդ բա-
ռերին այլ խոսքի մասերից սահմանազատող և միայն կապակցա-
կան ֆունկցիայով՝ հանդես եկող գործածություն։ Օրինակ՝ քանի
բառը իր այդ ձևով կարող է որպես հարաբերական դերանուն էլ

հանդես գալ, իսկ քանի որ ձեռքով չի կարող: Մինչև բառը խոսքի մասային երկու արժեքով կարող է հանդես գալ, իսկ մինչև որ ձեռքով միայն շաղկապ է: Մանավանդ՝ թե եղանակավորող բառ է, թե շաղկապ, իսկ մանավանդ որ՝ միայն շաղկապ: Այլ է դրությունը վերջ հիշված ուլ, ինչ, որ հարաբերական դերանունների հետ: Այստեղ էլ այդ որ թարմատարի դերը այն է, որ նա սահմանազատում է նրանց այլ կիրառությունները (օրինակ հարցական դերանվան) և ստիպում է, որ հանդես գան միմիայն կապակցական գերով: Սակայն սրանք արդեն չեն զրկվում իրենց նյութական բովանդակությունից, ինչպես վերևում բերված շաղկապները:

Ինչպես արդեն ասել ենք, հարաբերական դերանունները շարահյուսական կապակցություն ստեղծելու տեսակետից մոտենում են շաղկապներին, բայց նախադասության մեջ որևէ պաշտոնով հանդես գալու տեսակետից մնում են նյութական բովանդակություն ունեցող բառերի շարքում: Նրանք երկակի բնույթ ունեն, հանդես են գալիս դերանվանական և շաղկապական խոսքի մասային երկու արժեքներով և հենց դրանով էլ տարբերվում են շաղկապների հետ հարաբերակցող այն բառերից, որոնք շաղկապական կիրառություն ունենալու դեպքում ոչնչով չեն տարբերվում շաղկապներից, քանի որ կորցնում են իրենց նյութական բովանդակությունը և դրա հետ միասին նախադասության անդամ լինելու իրենց հատկանիշը: Դրա լավագույն ապացույցը որ շաղկապի դերանվանական ծագումն է: Դրաբարում նա կանոնավոր կերպով թե՛ հոլովով, թե՛ թվով համաձայնում էր փոխհարաբերության հետ, այնուհետև, հենց գրաբարում սկսում են անհամաձայնության դեպքեր, որից հետո այն աստիճանաբար գիտակցվում է որպես շաղկապ: Այդ է պատճառը, որ հենց V դարում էլ զի շաղկապի փոխարեն սկսվում է գործածվել որ դերանունը:

Օրինակ՝ «Այնպես արարից քեզ՝ որ ասես թէ շատ է (զի ասացես)»¹: «Աղաչեին՝ որ զայս ողջ անարատ հասուցանել մարթասցեն»¹:

Անմիջապես գլխավորի ստորոգյալի հետ կապվող այդ ուր բնավ էլ դերանվան տեղը չէր, քանի որ գրաբարում այդ նպատակով գործածվում էր զի շաղկապը: Ուր շաղկապի այս գործածությունը արդեն ցույց է առնում, որ նա ամուր կերպով կանգնած էր իր նյութական իմաստը կորցնելու ճանապարհին և այդ է պատճառը, որ

¹ Ա. Այաբեկեան, Քննական քերականություն..., Վիեննա, 1866, էջ 67.

ժամանակակից հայերենում կա ու հարաբերական դերանուն և ու շաղկապ, վերջինը գլխավորապես աճն դեպքերում, երբ իրենով սկսվող երկրորդականը կապվում է գլխավոր նախադասության ստորոգյալի հետ:

Այժմ աշխատենք պարզել այն հարցը, թե ու բառը երբ է հանդես գալիս որպես շաղկապ և երբ՝ որպես դերանուն: Այս հարցով զբաղվելը այնքանով է կարևոր, որքանով որ մեր քերականությունների մեջ վերջնականապես որոշված չեն այս կամ այն խոսքի մասային արժեքով հանդես գալու նրա կոնկրետ կիրառությունները:

Որպես շաղկապ գործածվում է այն դեպքերում, երբ, կապվելով գլխավոր նախադասության ստորոգյալի հետ, որևէ կողմով պարզաբանում, լրացնում է նրա իմաստը:

Օրինակներ՝ «Նրանք մտածում էին, ու իրենց գործը թարսվել է նրա համար, որ հարևանի գործը հաջող է գնում» (ՆԶ, 344), «Ընդհակառակը, ես շատ ուրախ եմ, ու դուք ուզում եք ինձ ընկերակցել» (Ն.Դ., 15):

Կամ էլ ստորոգյալի լրացումների հետ՝

Ուրախության ալիքը բարձրացավ աչքան, ու սրբեց, ետ վանեց քունը (ԱՔԾ, 420):

Գրկում ես սիրով անհույս

Այնպես միշտ ջերմ ու համառ,

Ու սիրտս համր ու անհույզ

Բացվում է սիրո համար (ՎՏ, 225):

Երբ ուր-ը օգտագործվում է իր այս ուղիղ ձևով, առանց որոշյալ հոգի և չի կապվում անմիջականորեն գլխավոր նախադասության ստորոգյալի հետ, ապա երբեմն շատ դժվար է լինում որոշել նրա խոսքի մասային պատկանելությունը և պատահական չէ, որ քերականների կարծիքները այս հարցում բաժանվում են: Այդ պատճառով ավելորդ չենք համարում կանգ առնել այս խնդրի վրա:

Ու բառի շաղկապ լինելը ոչ մի տարակուսանք չի առաջացնում այն ժամանակ, երբ շնայած չի կապվում գլխավոր նախադասության ստորոգյալի կամ նրա լրացումների հետ, բայց շաղկապում է այնպիսի որոշիչ երկրորդական նախադասություններ, որոնց գլխավոր նախադասության մեջ համապատասխանում է այնպիսի հարաբերյալը:

Օրինակ՝

Եվ այնպիսի տարփանքներ նրանք կտան հիմա քեզ,

Ու կամոքվի քո հոգին կարոտանքից սիրակեզ (ԵԶ, 150):

Նման դեպքերում երկրորդական նախադասությունը միշտ հետևանքի երանգով է հանդես գալիս:

Կան նաև ուրիշ շատ դեպքեր, որտեղ առ-ը որոշիչ երկրորդական նախադասություն կապակցելու ժամանակ հանդես է գալիս որպես շաղկապ: Օրինակ՝ «Նա նայեց Սուրիկին այնպիսի հայացքով, որ խեղճը մոռացավ նույնիսկ բարեկեց»:

Քննենք առ բառի կիրառությունները հետևյալ օրինակներում:

«Այգ բարի ժպտի մեջ ես տեսա նրա՝ դեպի ինձ ցույց տված առնությունը, որ սկզբում բավական կաշկանդում էր ինձ»:

«Դրանք հավանաբար համահարգներ էին, որ կարգադրություն էին անում այս ու այն զորամասին»:

«Այդ խոշոր աչքերում կար այնպիսի փայլ, որ երջանկության սարսուռով էր լցնում նայողի սիրտը»:

Այս օրինակներից առաջինում և երրորդում լիովին հնարավոր է ավելացնել ը որոշիչ հոդը, իսկ երրորդում առ բառի փոխարեն օգտագործել առանձ հարաբերական դերանունը՝ առանց նախադասության կառուցվածքին և իմաստին վնասելու, որով միանգամայն հշտվում է նրանց շաղկապ կամ հարաբերական դերանուն լինելը, քանի որ նյութական բովանդակությունից զուրկ խոսքի մասի վրա որոշիչ հոգ ավելացնել, կամ էլ այն հոգնակիի վերածել հնարավոր չէ, երբ հանդես չեն գալիս փոխանվանաբար: Մեզ թվում է, որ ձևաբանական այս մոմենտի հաշվառումը գրեթե միակ միջոցն է այս հարցը դրականապես լուծելու համար: Եվ վերջապես բոլոր այդ օրինակներում առ հարաբերականը հանդես է գալիս երկրորդական նախադասության մեջ ենթակայի պաշտոնով, մի բան, որ բացահայտ չէր երևում ուղիղ ձևով գործածվելիս:

Թվում էր, թե... անցել են շատ ժամեր, և ինքը կանգնած է երկրի վրա, նայում է այն աղքատ ետևից, ուր իրեն այնքան մոտիկ էր թվում երեկ (ՀՔ, 73):

Այստեղ արդեն ուրե ձևով հարաբերական դերանունը ենթակայի դերում է: Մենք կարող ենք հանել ն որոշիչ հոդը, և այն տավ-վորությունը կառաջանա, որ նա իրոք շաղկապ է: Բայց դա, իհարկե, խաբուսիկ է: Եթե նա տվյալ նախադասության մեջ փոխարինում է աղքատ գոյականին, ապա նա պետք է համարվի հարաբերական դերանուն, թեկուզ և որոշիչ հոդից զուրկ լինի:

¹ Այս երեք օրինակները վերցրել ենք Ն. Պառնասյանի «Ստորադասական» հապակցությունը ժամանակակից հայերենի բարդ նախադասություններում դիտարկող աշխատից:

Ուր բառը հարաբերական դերանուն պիտի համարել նաև այս դեպքերում, երբ կապակցում է այնպիսի որոշիչ երկրորդական նախադասություններ, որտեղ այն, այնպիսի հարաբերյալները բացակայում են:

Օրինակներ՝ «Թագավորի դեմքի վրա փայլեց դոհության մի ծալիտ, ու սակայն զարմանք պատճառեց վիրաբուծին» (Մուր., 347), «Վարդան Մեծ սեպուհը մռայլ էր և լուռ ձիավարում էր առջևից, նրա կողքից դնում էր Ավետիք սեպուհը, ու նույնպես լուռ էր» (ՍԳ, 1956 թ., 11, էջ 17): «Արևմուտքին պարզ երևացին Դվին մայրաքաղաքի ոսկեգույն կավե պարիսպները, ու տեղ-տեղ ծածկված էին երևում ծառերի հորդած ու պոռթկած բարձրախիտ սաղարթներ» (ՍԱ, 1956 թ., 11, էջ 20):

Այս բոլոր օրինակներում որոշիչ երկրորդական նախադասություններում ենթական արտահայտված չէ. ավելի ճիշտ կլիներ ասել, որ այն արտահայտված է, բայց այնպիսի բառով, որ երբ նրա վրա որոշիչ հոդ չի լինում (առաջին և երկրորդ օրինակները), կամ էլ հոգնակի ուղղական հոլովի ձևով չի գործածվում (երրորդ օրինակը), ապա շփոթվում է ու շաղկապի հետ:

Ուր հարաբերական դերանվան անհամաձայնության և անորոշ առումով գործածվելու այս դեպքերը այնքան են տարածված ժամանակակից հայերենում, որ նման կառուցվածք ունեցող նախադասությունները արդեն որակ են կազմում լեզվում, այն էլ այնպիսի որակ, որ հաճախ կարծես շաղկապ համարելը ավելի տրամաբանական է թվում: Սակայն քանի որ քիչ չեն նաև ուր, ուրեմ և այլ թեք ձևերով եղած գործածությունները, ապա այդ պատճառով էլ դեռ կենդանի է նրանց միջև եղած ծագումնաբանական կապը, ինչպես որ կենդանի է նաև նրանց համանման շարահյուսական կապակցություններ ստեղծելու հատկանիշը: Սակայն ինչքան էլ որ նրանք սերտ հարաբերակցության մեջ են գտնվում միմյանց հետ, դարձյալ նրանց միջև (ու շաղկապի և ուր դերանվան) կան էական տարբերություններ. հարցը այն է, որ մեր բերած օրինակներում ու հարաբերական դերանվան անհոդ գործածությունը մթազնում է նրա նախադասության անդամ լինելը, մինչդեռ հոդով գործածվելու դեպքում կասկածի ոչ մի առիթ չի մնում: Դա առաջանում է գլխավորապես այն պատճառով, որ նա հարաբերական դերանվան վրա ավելաճալիս այն նույն կիրառությամբ հանդես չի գալիս, ինչ որ, ասենք, գոյականի վրա ավելանալիս: Եթե գիրք գտա և գիրքը գտա նախադասություններում որոշիչ հոդը նշում է, որ խոսքը մեզ ծանոթ կամ հայտնի գրքի մասին է, ապա այն բոլորովին այդ իմաստով հանդես չի

գալիս ռւ հարաբերական դերանվան հետ գործածվելիս՝ Ավելին. նա կարծես ձեռք և բերում մի նոր ֆունկցիա, գլխավոր նախադասության որևէ մի անգամի ակնարկելու ֆունկցիա, հետևաբար և ռւ հարաբերականը ռւ շաղկապից տարբերելու ֆունկցիա: Այդ է պատճառը, որ որոշիչ հոգով գործածվելու դեպքում ավելի ցայտուն է դառնում գլխավոր նախադասության որևէ մի անգամին փոխարինելու և երկրորդականում որևէ պաշտոնով հանդես գալու նրա շարահյուսական հատկանիշը:

Այստեղ հետաքրքրական է նաև այն հանգամանքը, որ որոշիչ հոգով գործածվելու կամ չգործածվելու դեպքում, հետևաբար նախադասության անգամ լինելը շեշտված կերպով դրսևորվելու կամ չդրսևորվելու դեպքում բարդ նախադասության արտահայտած ընդհանուր բովանդակության մեջ իմաստային փոփոխություններ չեն առաջանում. համեմատիր օրինակ՝

Թագավորի դեմքի վրա փայլեց գոհության մի ժպիտ, որ(ը) սակայն զարմանք պատճառեց վիրաբույժին:

Որոշիչ հոգը այստեղ ընդգծեց սոսկ դերանվամբ արտահայտված ենթական:

Ռուսերենում որոշիչ երկրորդական նախադասությունների կապակցման համար օգտագործվում են, ի թիվս այլ հարաբերական բառերի, նաև *который* և *что* հարաբերական դերանունները¹: Այդ դերանունների ֆունկցիաների մեջ տարբերություն չկա, միայն թե *который* բառը կարող է ունենալ բոլոր հոլովաձևերը և օգտագործվել ինչպես նախդիրներով, այնպես էլ առանց նախդիրների, ապա *что* հարաբերական բառը որոշիչ երկրորդական նախադասությունների մեջ օգտագործվում է միայն ուղղական և հայցական հոլովի ձևով առանց նախդիրների, այսինքն կարող է հանդես գալ միայն ենթակայի և ուղիղ խնդրի պաշտոնով (*Грамматика русского языка, том II, часть вторая, стр. 275*): Հայերենում ու-

¹ Այդ բանը պարզ երևում է հետևյալ օրինակում՝ նա տեսավ մի մարդու, որը շատ նման էր իր եղբորը: Մեզ բառից առաջ անորոշ մի հոգը ենթադրում է ռւ հարաբերականի անորոշ գործածություն, բայց քանի որ, ինչպես նշեցինք, որոշիչ հոգի դերը այստեղ այլ է, ապա նման գործածությունները սխալ չեն համարվում:

² Սակայն եթե ռուսերենի, ինչպես նաև ֆրանսերենի ու գրաբարի համար հատկանշական է այն, որ այդ լեզուներում որպես որոշիչ երկրորդական նախադասությունների կապակցման միջոց հանդես են գալիս միայն հարաբերական դերանունները՝ որևէ պաշտոնով, ապա արդի հայերենում, բացի այդ դերանուններից, այդ նպատակով օգտագործվում են նաև շաղկապները (ռւ, ք և այլն):

սերենր այդ երկու հարաբերական դերանունների փոխարեն օգտագործվում է մեք դերանունը իր հոլովական տարրեր ձևերով:

Հայերենի և ռուսերենի ու ֆրանսերենի որոշիչ երկրորդական նախադասությունների կապակցական միջոցների միջև եղած այս տարբերությունը առաջանում է գլխավորապես այն պատճառով, որ հայերենի որոշիչ երկրորդական այն նախադասությունները, որոնց մեջ մեք շաղկապը կապվում է գլխավորի այնպիսի հարաբերյալի հետ և որոնց մեջ իշխում է նաև հետևանքի երանգը, հիշյալ երկու լեզուների քերականները տեղադրում են հետևանքի երկրորդական նախադասությունների բաժնում¹, որի պատճառով նման կառուցվածք ունեցող նախադասություններում օգտագործվող *что* և *que* շաղկապները այլևս չեն դիտվում որպես որոշիչ երկրորդական նախադասությունների կապակցության միջոցներ: Մինչդեռ հայերենում նման հետևանքի երանգ ունեցող նախադասությունները դիտվում են որպես որոշիչ, հետևաբար և այդ բնույթի նախադասությունների համար օգտագործվող մեք շաղկապն էլ դիտվում է որպես որոշիչ երկրորդական նախադասությունների կապակցության միջոց: Սակայն, ի տարբերություն այդ լեզուների, հայերենում կան նաև այնպիսի որոշիչ երկրորդական նախադասություններ, որոնք հետևանքի երանգ չունեն, բայց նորից կապակցվում են մեք շաղկապով, ինչպես՝ «Մենք այն կարծիքին ենք, որ հարկավոր է նախօրոք պատրաստվել քննություններին»:

Այսպիսով, հայերենը այս հարցում կապակցական միջոցների օգտագործման մի նոր աստիճանի վրա է կանգնած:

Այժմ անցնենք մյուս հարաբերական դերանուններին:

Ինչքան, որքան, ինչչափ, որչափ, քանի, ինչպես, որպես հարաբերական դերանունները կապակցում են ձևի և չափի պարագա երկրորդական նախադասությունները գլխավորին: Գլխավոր նախադասության մեջ սրանց սովորաբար համապատասխանում են այնքան, այնչափ, նույնչափ, նույնքան, այնպես ցուցական դերանունները:

Օրինակներ՝ «Բայց ես քեզ կհանձնեմ մի պաշտոն, որ նույնչափ ծանրակշիռ է, որչափ և զինվորությունը. դու արժանի ես դրան» (Մուր., 293): «Սահակը հագնված էր այնպես շքեղ, այնպես թանկագին զարդարանքներով, որպես հագնվում է մի մեծ արքայազն իշխան» (Րաֆ., 81): «Ուրքան արևը բարձրանում էր, այնքան ճապարհի անցուղարձը ավելի կենդանություն էր ստանում, այնքան

¹ См. Грамматика русского языка, том II, часть вторая, Москва, 1954, стр. 341 и О. И. Богомолова, Совр. франц. язык, Москва, 1948, стр. 391:

հաճախ պատահում էին քաղաքացիք...» (Ռաֆ., 12): «Իմ Ս. Դ.-ական հեղափոխական աշխատանքների մասին այս հուշերում գրում եմ այն շափով, որչափ նա կապ ունի իմ հեղափոխական-գրական գործունեության հետ» (ՀՀԵ, 351): «Հեկեկաց ճիշտ այնպես, ինչպես սարսափելի գաղտնիքի» պատմությունից հետո մենք թաղեցինք մեր առաջին սերը...»¹ (ՀՀԵ, 321): «Երբ լուր տարածվեց, թե Բեշիրը դիմում է Բյուրական՝ կաթողիկոսին ձերբակալելու, ճգնաժողովը հրավեր կարդաց յուր գնդին՝ գնալ հայրապետին օգնության, որովհետև նա նույնչափ լքյալ ու անօգնական էր, որքան գեղջուկ ժողովուրդը» (Մուր., 268): «Փանի մոայլում է նա, այնքան ժպտում են մագաղափները» (ԴԴ, 199) և այլն:

Այս բարդ նախադասություններում օգտագործված հարաբերական դերանունները հանդես են գալիս երկրորդական նախադասությունները գլխավորներին կապակցելու դերով և, միաժամանակ, նաև նախադասության որևէ անդամի դերով: Սակայն իրենց այս վերջին դերը նրանք նույն հաջողությամբ չեն կատարում, ինչպես որ կատարում են իրենց կապակցական գերը: Նրանք ավելի այս վերջին դերով են արժեքավորվում ու աչքի ընկնում, և դա պատահական չէ: Ահա ինչ է գրում հարաբերական դերանունների այս հատկանիշի մասին Ս. Աբրահամյանը՝

«Բացարձակ անորոշ իմաստով պետք է բացատրել նաև այդ դերանունների հարաբերականի ֆունկցիա կատարելը, որ հատուկ է նրանց, ի տարբերություն մյուս դերանունների, Այդ ֆունկցիայով նրանք մոտենում են շաղկապներին... Բացարձակ անորոշ դերանունները (խոսքը հարաբերական դերանունների մասին է, որ հեղինակը առաջարկում է անվանել բացարձակ անորոշ կամ էլ ճարտարական-ճարտարական. ավանդական անվանումը պահպանելու համար), թեև նյութական իմաստ ունեն, բայց այդ իմաստը լինելով միանգամայն վերացական ու անորոշ՝ չի խանգարում, այլ պայմանավորում է, որ նրանք արտահայտեն հարաբերություն, կատարեն հարաբերականի ֆունկցիա: Բոլորովին պատահական չէ, որ այդ դերանուններից մի երկուսը արդեն մտնում են նաև շաղկապների շարքը՝ զրկվելով նյութական իմաստից»²:

¹ Ռուսերենի ակադեմիական քերականության մեջ как-ը շաղկապ է համարվում նաև այն ժամանակ, երբ գլխավորում նրան համապատասխանում է так ցուցական դերանունը, կամ մի ուրիշ հարաբերյալ, ինչպես՝ Левин узнал Катавасова в соломенной шляпе, шедшего, точь так размахивая руками, как представляла Таяя. (Том II, часть вторая, стр. 343—344):

² Ս. Գ. Աբրահամյան, Արդի հայերենի դերանունները, Երևան, 1956, էջ 166:

Սակայն երբ գլխավոր նախադասության մեջ բացակայում են այդ հարաբերական դերանունների հետ կապվող ցուցական դերանունները (հարաբերյալները), որի պատճառով թուլանում է նրանց առանց այն էլ ոչ կոնկրետ նյութական բովանդակությունը, ապա դրանցից մի քանիսը օգտագործվում են որպես շաղկապներ, տարրեր բնույթի ելկրորդական նախադասություններ կապակցելով գրությունի հետ:

Ինչպես հարաբերական դերանունը շաղկապական կիրառություն է ձեռք բերել և շաղկապ է դարձել հետևյալ նախադասությունների մեջ՝

Ախ, թե կարկաշեն երգերս անվիշտ,

Իբրև լեռնային աղբյուրներ անմեռ,

Ծն երեխա եմ մնալու առմիշտ,

Ինչպես հորս համար երեխա եմ դեռ (ՀՍ, 187):

Սովետական մամուլի ուժը, ինչպես սովորեցրել է մեծ լենինը ոչ միայն նրա մասսայականության, այլև ճշմարտացիության մեջ է (ՍՀ, 1956, դեկտ. 9, էջ 2):

Այս վերջին նախադասության մեջ նույնպես ինչպես հարաբերականը ձևի ոչ մի երանգ չունի. նա պարզապես ծառայում է միջանկյալ նախադասության շաղկապմանը, առանց նրա անդամը լինելու. նա այս օրինակում լիովին կորցրել է իր նյութական բովանդակությունը: Համեմատիր նաև՝

Ինչպես հաղորդում են թերթերը, Ծգիպտոսում հիմնվել է Պորտ-Ուսիդի համար մղված ճակատամարտի հիշատակին նվիրված նոր մեդալ (ՍՀ, 1956, դեկտ. 14, էջ 3):

Այս վերջին կառուցվածքի նախադասությունները շատ տարածված են լրագրային և հրապարակախոսության լեզվում:

Միջանկյալ նախադասության շաղկապմանն է ծառայում նաև XIX դարի գեղարվեստական գրականության մեջ հանդիպող ռուսական հարաբերական դերանունը հետևյալ օրինակում՝

— Ճերմակը դեռ նստելու չէ, — պատասխանեց Արքակը գործագետ մարդու եղանակով, — այդ անիրավը, ռուսն տեսնում եմ, խելքի գալու միտք չունի (Բաֆ., 62):

Սակայն շաղկապական կիրառությամբ հանդես եկող այս բառը տարածում չգտավ և փոխարինվեց ինչպես շաղկապով:

Արդյո՞ք շաղկապական խոսքի մասային արժեքով հանդես չի գալիս ինչիս հարաբերականը հետևյալ նախադասության մեջ՝

Ծն չեմ տա իմ աղջկան նրան, — ասում էր նա, — իմ աղջիկը կին չի դառնա մշակին, ինչպես կին չի կարող դառնալ արու եղջե-

բուին գայլի վզ ձագը, ինչքան էլ գեղեցիկ լինի եղջերուն (ՀՔ, 210)։

Մեզ թվում է, որ այստեղ տատանվելու կարիք չկա. նա այդ նախադասության մեջ հանդես է գալիս զիջական իմաստով և լիովին կարող է փոխարինվել քեկուզ շաղկապով։ Ել բառը այստեղ ուժեղացնում է նոր ձեռք բերած շաղկապական իմաստը։ Սխալ կլիներ այն դիտել որպես չափի պարագա։ Նա նախադասության անդամ չի կարող համարվել, հետևաբար և հարաբերական գերանուն չէ։ Ինչքան էլ արտահայտության այս նոր տարածվող կիրառությունը շատ տարածված է նաև բանավոր խոսքում։ Կա նաև ռբքան էլ ձեռք, ինչպես՝

Եվ տերտերը ռբքան էլ ցրված, այնուամենայնիվ նկատում է նրա ներկայությունը և գոռում անսպասելի զայրացած (ՍԶ, 115)։

Բավական տարածված են նաև ռբքան, ինչքան բառերի շաղկապական կիրառությունները նաև առանց էլ-ի, մանավանդ բանավոր խոսքում. օրինակ՝

Ինչքան խնդրես, չեմ երգի։

Իհարկե, սրանք (ռբքան (էլ), ինչքան (էլ)) որպես նորակազմ շաղկապներ, դեռ լիովին չեն կտրել իրենց կապը նյութական բովանդակություն ունեցող իրենց համարժեքներից, ինչպես ռբ շաղկապը ռբ դերանունից. դրա համար անհրաժեշտ է ավելի տեղական գործածություն։

Հետաքրքրական է նաև այն, որ ինչպես հարաբերական դերանունը գործածվելով իր հարաբերյալի հետ, այսինքն զույգ շաղկապի գործածություն ունենալով, ծառայում է համադասական բնութթի կապակցություն ստեղծելուն՝ նախադասության համազոր անգամների միջև։

Օրինակներ՝ «Այդտեղ էին ինչպես հսկում կատարողները, նույնպես և այն կանայք ու ծերունիք, որոնք զորքին պիտանի լինել չէին կարող» (ՐաՖ., 100)։ «Ինչպես հին հայերի, նույնպես պարսիկների մեջ, նույն սովորությունն էր տիրում» (ՐաՖ., 100)։ «Գործողության կատարման ինչպես տեղը, այնպես և ժամանակը սերտորեն կապված են միմյանց հետ»։ «Իր ժողովրդի հարազատ ձգտումների, իղձերի քաջաբազուկ արտահայտին էր Դերենիկ Դեմիրճյանը, որի մահը ինչպես ինձ, այնպես էլ ամբողջ վրաց գրողներին մեծ վիշտ պատճառեց» (ՍԶ, 1956, դեկտ. 9, էջ 3)։

Այդեն այս նախադասությունների մեջ ինչպես... նույնպես և, ինչպես... նույնպես, ինչպես... այնպես էլ, ինչպես... այնպես և բառերը ձեռք են բերել համադասական միավորիչ շաղկապի սաստկական երանգ, ինչպես քե՛...քե՛..., և՛...և՛... կրկնագիր գործածու-

Քյուն ունեցող շաղկապները նրանք այս օրինակներում նախադասության անդամ չեն կարող համարվել, հետևաբար և հարաբերական դերանուններ կամ շաղկապներ չեն, այլ նյութական բովանդակությունից զուրկ սպասարկու բառեր՝ շաղկապի արժեքով, ժամանակակից հայերենում բավական տարածված և տարածվում են հատկապես ինչպես...այնպես և, ինչպես...այնպես և շաղկապները¹։

Համադասական նորակազմ շաղկապ է նաև ինչպես հարաբերական դերանունը արդեն միայնակ գործածությամբ՝ և կամ նաև շաղկապների հարադրությամբ։

Օրինակներ՝ «Սովետական զորամասերի, ինչպես նաև սովետական զորքերի կազմի մեջ մտնող անձանց և այդ անձանց ընտանիքների անդամների լեհաստան մտնելու և լեհաստանից դուրս դալու կարգը, լեհական ժողովրդական Ռեսպուբլիկայի տերիտորիայում նրանց գտնվելու հետ կապված հարցերը, ինչպես նաև համապատասխան փաստաթղթերի տեսակները պայմանավորվող կողմերը սահմանում են հատուկ համաձայնագրով» (ՄՀ, 1956, դեկտ. 19, էջ 1)։ «Պրուլետարիատի և Կոմունիստական պարտիայի կողմից ղեկավարվող պետությունը վճռականաբար հանդես է գալիս իմպերիալիստական ագրեսիայի դեմ...», անում է ամեն ինչ, որպեսզի աջակցություն գտնի բոլոր երկրների աշխատավորների կողմից, ինչպես և օգնի բոլոր երկրների աշխատավորներին ու բոլոր ճնշված ազգերին» (ՄՀ, 1957, հնվ. 3, էջ 3)։

Այս երկու նորակազմ շաղկապները հատկապես տարածված են պարբերական մամուլի և գիտական բնույթի գրվածքներում և շատ քիչ տարածում ունեն գեղարվեստական գրականության մեջ։ Սրանք, դրվելով երկու համազոր անդամների կամ կապակցությունների միջև, շեղված ձևով նշում են կապակցվող անդամի համազոր կամ համավիճակ լինելը։

Ինչպիսի, ռալիսի հարաբերական դերանունները, հանդես գալով որոշիչ երկրորդական նախադասությունները գլխավորի հետ կապակցելու դերում, չեն զրկվում նյութական իրենց բովանդակությունից և երկրորդական նախադասության կազմում հանդես են գալիս որպես անդամ։ Մենք մինչև այժմ չենք նկատել, որ այդ դերանունները շաղկապական կիրառություններ ունենան, այսինքն իրենց

¹ Արդյոք համադասական նման կապակցություն չեն կազմում ընդգծված բառերը հետևյալ օրինակում՝ Այդ հաջողությունը պետք է վերաբերել ոչ այնքան նրա տաղանդին, որքան նյութի այն ահագին պաշարին, որ պատրաստել էր նրանց համար նախընթաց դրականությունը (Բաֆ., 10)։ Այստեղ նույնպես մենք գործում ենք միավորիչ զուգադիր շաղկապի հետ։

նյութական բովանդակության ժամանակավոր կորուստ ունենան, ինչպես մեր նշած մի քանի հարաբերականները:

Օրինակներ՝ «Առաջին անգամ երբ ես տեսա անաշա ծխած մի կալանավորի՝ դա ինձ վրա թողեց համարյա միստիկական տպավորություն, ուրախ տպավորություն թողնում են ընկնավորներն ու յուրողիվիները» (ԵԶ, 460): «Իսկուհայի ընթացքում Սովետական Միության, Չեխոսլովակիայի, Հնդկաստանի, Հունաստանի, Սիրիայի, Ցեյլոնի, Մարոկկոյի և մի շարք այլ երկրների ներկայացուցիչներն ընդգծում էին այնպիսի պրոբլեմների նշանակություն, ինչպիսիք են զինաթափումը, Ալժիրի և Կիպրոսի հարցերը» (ՍՀ, 1947, հրմմ. 5, էջ 3):

Շաղկապների հետ սերտորեն հարաբերակցում է նաև ֆանի դերանունը: Նրա, որպես հարաբերականի, կիրառությունը սահմանափակվում է այն դեպքերով, երբ գլխավոր նախադասության մեջ առկա է որևէ հարաբերյալ, գլխավորապես այնքան ցուցական դերանունը:

Օրինակներ՝ Քանի մոայլում էր նա, այնքան ժպտում են մազաղաթները (ԴԻ, 199):

Նա ֆանի քայլում, մոտենում էր տանն

Ու անցնում ծանոթ արտերի մոտով,

Լցվում էր այնքան կիզող կարոտով

Ու սիրտն անհամբեր զարկում էր այնքան: (ՆԶ, 147):

Այս բարդ նախադասություններում նա դեռ չի հասել շաղկապի աստիճանին. նա դեռ նախադասության անդամ է նկատվում և սերտորեն կապված է իր նյութական բովանդակությունը շեշտող այնքան հարաբերյալի հետ: Սակայն նույնը չենք նկատում հետևյալ նախադասություններում՝

Քանի ծնողներից, եղբայրներից ու քույրերից հեռու էր, Սմբատը կարողանում էր իր կյանքի գաղտնիությունը մի կերպ մարսել (Շիրվ.):

Արդյոք իզուր չի՞ անցնիլ իմ գաղտնիք հայտնելը, ֆանի դու գտնվում ես այս բերդում (Մուր., 365):

Այս նախադասություններում ոչ մի կասկած չկա, որ նա շաղկապ է, ժամանակի շաղկապ, զերծ նախադասության անդամ լինելու հատկանիշից: Գործածվում է նաև ֆանի դեռ ձևով, ուր ավելի է շեշտվում նրա ժամանակային նշանակությունը: Այսպիսով, քանակի վերաբերյալ հարցում արտահայտող բառը դարձել է շաղկապ՝ անցնելով անշուշտ հարաբերյալի հետ ունեցած կապակցության ուղիով (այնքան... ֆանի..., ֆանի... այնքան, այնքան ժամանակ... 102

փանի դեռ), որտեղից էլ արդեն ստացել է ժամանակի իմաստը, որը ամրացել է նրա վրա, արդեն անկախ այն բանից, թե հարաբերյալ ունի թե ոչ: XIX դարի հայ դրականության մեջ կա նաև փանի որ ձևը, նույնպես ժամանակի իմաստով գործածված, ինչպես՝ «Լոհր, աներես, լոհր, փանի որ խելքս գլխիս է (Նիրվ. 270)»:

Այստեղ փանի որ նշանակում է փանի դեռ: Սակայն հետագայում այս շաղկապի ժամանակային երանգով ունեցած գործածությունը դադարեց և նույն շաղկապը սկսեց արտահայտել բացառապես պատճառական հարաբերություններ, մի բան, որ արդեն զուգահեռ կերպով կատարվում էր նաև առաջ: Պատճառային իմաստ ունեցող փանի որ շաղկապը, ինչպես տեսնում ենք, կապված է եղել ժամանակային բնույթի նույն շաղկապի հետ և նրանից է առանձնացել: Դա զարմանալի չէ, քանի որ իրականության մեջ կատարվող բազմաթիվ ու բազմազան երևույթները սերտորեն կապված են ժամանակի գաղափարի հետ: Բերենք նաև մի ուրիշ օրինակ՝

...իսկ դու կսիրե՞ս նրան, ճիշտն ասա, կսիրե՞ս:

— Կսիրեմ, փանի որ քո ընկերուհին է (ՀՔ, 358):

Պատճառային հարաբերություն ունեցող այս շաղկապի կապը ժամանակային հետ իսկույն երևում է, երբ հանում ենք որ շաղկապը, որի դեպքում պարզ կերպով արտահայտվում է «այնքան ժամանակ, փանի դեռ» իմաստը:

Դերանվանական և շաղկապական զուգահեռ արժեքով է հանդես գալիս նաև երբ դերանունը: Մեզ թվում է, որ երբ այն կապում է երկրորդականը գլխավորի հետ և գլխավորում բացակայում է հարաբերյալ որևէ մի բառ, այդ դեպքում նա շաղկապ է, իսկ երբ գլխավորում առկա է հարաբերյալ մի բառ, ապա նա քիչ հեռանում է յուր շաղկապական նախորդ դիրքից: Օրինակ՝

Երբ զանգը տվեց, ես արդեն դասարանումն էի:

Ջանգը տվեց այն ժամանակ, երբ ես դասարանում էի:

Այս երկու նախադասությունների կապակցության միջոցների մեջ կա այն տարբերությունը, որ առաջին նախադասության մեջ երբ հարաբերական դերանունը չունի այն նյութական բովանդակությունը, որը դերանուններին է հատուկ և ծառայում է լոկ գլխավոր և երկրորդական նախադասությունների կապակցությանը: Երկրորդ նախադասության մեջ երբ դերանվան կապը յուր հարաբերյալի հետ դեռ կենդանի է, որի պատճառով այն ժամանակ բառակապակցությունը զգալ է տալիս նրա այդ նյութական բովանդակությունը:

Այս բառի շաղկապ լինելու օգտին է խոսում նաև այն հանգամանքը, որ նա միշտ ժամանակային երանգով նախադասություններ

չի կապակցում, այլ հանդես է գալիս նաև բացատրական և պայմանի շաղկապների նշանակութամբ: Այդ փաստը արդեն ցույց է տալիս, որ նա ձեռք է բերել քերականական բազմիմաստություն, հետևաբար և խզել է կապը դերանվանական խոսքի մասային բովանդակություն ունեցող հարաբերականներից: Անշուշտ այստեղ չենք խոսում ե՞րբ հարցական դերանվան կիրառության մասին, որը երբեք չի կարող շաղկապ դառնալ, քանի որ նրա դերը բոլորովին ուրիշ է և ունի իր հատուկ գործածությունը լեզվում, ինչպես՝ «Երբ է տալիս դպրոցի զանգը»: Այսպիսով մենք ընդունում ենք հիմնականում երբ-ը որպես հարցական գերանուն և երբ-ը որպես արդեն շաղկապ դարձած խոսքի մաս, չնայած որ այդ դերանունը իր հարաբերյալի հետ ունեցած մասնակի կիրառություններում դեռ լրիվ չի դրսևորվում որպես շաղկապ: Նրա շաղկապական և դերանվանական խոսքի մասային արժեքի մասին խոսելիս անպայման պետք է հաշվի առնել այն հանգամանքը, թե որ խոսքի մասային արժեքով է նա ավելի գործածվում:

Մասնակի ձևով, այսինքն խոսքի մասային համատեղ արժեքներով են հարաբերակցում շաղկապների հետ ուր, ուրկից (բարբառային), ուրեղ, ուրկից (այժմ անգործածական) հարաբերական դերանունները: Սրանք նույնպես ծառայում են բարդ ստորադասական կապակցություններ ստեղծելուն, տարբերվելով շաղկապներից նրանով, որ երկրորդական նախադասության կազմում հանդես են գալիս որևէ պաշտոնով: Դրանցից ուր-ը, համեմատած մյուսների հետ, ավելի է մոտենում շաղկապին, մանավանդ որ թեքման ձևերից էլ զուրկ է. սա, անշուշտ, երբ շաղկապի անցած ուղիով է գնում: Սակայն այն հանգամանքը, որ շաղկապների իմաստային դասակարգման մեջ չկան տեղի շաղկապներ և քանի որ տեղի պարագա երկրորդական նախադասությունների կապակցման համար օգտագործվում են միմիայն վերոհիշյալ դերանունները, ապա այդ պատճառով ուր-ը շաղկապ չի համարվում: Համեմատիք նրա հետևյալ գործածությունը.

Ախուրյան գետի արևմտյան ափի վրա, այնտեղ, ուր Տեկորի վտակը խառնվելով՝ գործում է ջրապարիակ մի եռանկյուն, կառուցված է հինավուրց մի քաղաք (Մուր., 354):

Այս օրինակում հարաբերյալի գործածությունը ճիշտ հարաբերական ուր դերանունից սուաշ ակններև է դարձնում նրա թե՛ նյութական բովանդակությունը և թե՛ նախադասության անդամ լինելը (չնայած պիտի ասել, որ նման դեպքերում շատ դժվար է հաստա-

ապես պնդել, թե նախադասության անդամ է տվյալ բառը, թե ոչ)։

Որոշ չափով այլ է դրությունը հետևյալ նախադասության մեջ՝
Կարդացի ու երկար մտածեցի այն կետի վրա, ուր նա խոսում է ձախ հավասարեցման մասին (ՆՁՀ, 376)։

Այս նախադասության մեջ ուր-ը հանդես չի դալիս տեղի իմաստով և պատահական չէ, որ այդ բառով սկսվող երկրորդական նախադասությունը իր բնույթով որոշիչ է։

Հնացած և այժմ անգործածական է ուսկից հարաբերականը՝

Մի կույր հայ, փայտով անխնա հարվածում էր աջ ու ձախ իր համար ճանապարհ բանալով դեպի այն կողմը, ուսկից կերակուրների հոտ էր գալիս (Շիրվ., 30)։

Տեղի հարաբերություն նշող դերանուն է եղել նաև ուստի բառը, որը այժմ բացառապես գործածվում է հետևանքի երկրորդական նախադասությունների կապակցման համար և համարվում է հետևանքի շաղկապ։ Իմաստի զարգացման համար կարելի է համեմատել որտեղից բառի հետևյալ կիրառությունները՝

Կախում ուղղանկյուն եռանկյան կողմերի և անկյունների միջև՝
Ուղղանկյուն եռանկյունից գտնում ենք

$$\frac{b}{a} = \sin B, \quad \frac{c}{a} = \cos B.$$

որտեղից՝

$$b = a \sin B, \quad c = a \cos B^1$$

Եռանկյունների նմանությունից եզրակացնում ենք

$$AM : MD = MC : MB,$$

որտեղից՝

$$AM \cdot MB = MD \cdot MC^2$$

Համեմատիր նաև ուստի բառի համանման կիրառությունը՝

Եթե MN-ը սեղանի միջին գիծն է, ապա ինչպես հայտնի է

$$MN = \frac{1}{2} (AD + BC) \cdot$$

Ուստի՝

ABCD սեղանի մակերեսը—MN·h, այսինքն՝ սեղանի մակերեսը հավասար է միջին գծի և բարձրության արտադրյալին³։

Ինչպես տեսնում ենք, որտեղից բառը սկսում է ձեռք բերել հե-

¹ Ա. Պ. Կիսելյով, Երկրաչափություն, առաջին մաս, Ներքին, 1955, էջ 194։

² Նույն տեղում, էջ 185։

³ Նույն տեղում, էջ 244։

տեղանքի շաղկապի իմաստ: Առայժմ նրա այս կիրառությունները տարածված են միայն գիտա-տեխնիկական բնույթի գործերում:

Երբեմն ուր, որտեղ, որտեղից հարաբերական դերանունները շաղկապ են անվանվում՝ անշուշտ նկատի ունենալով միայն նրանց կապակցական հատկանիշները: Այսպես՝ ռուսերենի ակադեմիական քերականության մեջ (Грамматика русского языка, Москва, 1954, Том II. часть вторая) когда, где, куда, откуда հարաբերական բառեր են համարված, երբ հանդես են գալիս որոշիչ երկրորդական նախադասությունների կապակցման դերով, իսկ երբ հանգես են գալիս ժամանակի և տեղի պարագա երկրորդական նախադասությունների կապակցման դերով, ապա համարվում են շաղկապներ (էջ 301 և 315), անկախ այն բանից, թե նրանց գլխավոր նախադասության մեջ ցուցական որևէ դերանուն (հարաբերյալ) համապատասխանում է, թե ոչ: Այդ բոլորով հանդերձ նույն այդ գրքի առաջին հատորում (Москва, 1952), ուր կատարված է շաղկապների իմաստային բաժանում, տեղական հարաբերություններ նշող կապակցական միջոցներին ոչ մի տեղ չի հատկացված: Այս անորոշությունը որոշ չափով լուծվում է նույն այդ հատորի Союзные (относительные) слова վերնագիրը կրող բաժնում, ուր նշված է, թե ստորադասական շաղկապների դերով հաճախ հանդես են գալիս դերանունները և դերանվանական մակբայները. նրանք կոչվում են շաղկապական (հարաբերական) բառեր: Որպես շաղկապական բառեր ամենից շատ հանգես են գալիս *который, какой, чей, кто, кто, когда, где, куда, откуда*. միաժամանակ նշվում է, որ նրանք հանդիսանում են երկրորդական նախադասության անդամներ (էջ 673): Ահա այդ բացատրականից հետո էլ չի պարզվում, թե ինչու *где, куда, откуда* բառերը շաղկապ են համարված նույն գրքի երկրորդ հատորի էջ 15 էջում:

ՇԱՂԿԱՊԻ ՀԱՐԱԲԵՐԱԿԱՆ ԴԵՐԱՆՈՒՆՆԵՐԸ ԱՆՈՐՈՇ ԴԵՐԱՆՎԱՆ ՀԵՏ

Անորոշ դերանուններից շաղկապների հետ հարաբերակցում են այլ, այնինչ բառերը, որոնք ունեն զուգահեռ թե՛ դերանվանական և թե՛ շաղկապական գործածություն, հետևաբար տեղադրվում են թե՛ դերանունների և թե՛ շաղկապների բաժնում: Սա անկանոն երևույթ չպետք է համարել, քանի որ, ինչպես տեսնում ենք, չթերվող խոսքի մասերի մեջ նման խոսքի մասային զուգահեռները բացառիկ դեպքեր չեն: Սա այսպես է ոչ միայն հայերենում, այլև ուրիշ լեզուներում (անգլերենում այդ երևույթը տարածվում է նաև ածականների,

գոյականների, մակբայների և այլնի վրա)։ Այդ պատճառով ավելի ուրիշ է դիտել վերոհիշյալ շաղկապները որպես դերանվան շաղկապական կիրառություն, այլ պետք է դիտել դրանք որպես շարահյուսական համապատասխան կիրառության պատճառով շաղկապական խոսքի մասային զուգահեռ արժեքներ ձեռք բերած լեզվական միավորներ։

Օրինակներ՝

«Ըստ վախենում եմ... ոչ ինձ համար, այլ՝ քեզ, քեզ համար» (ՆՁԶ, 416)։ Այստեղ այլ-ը շաղկապ է։

Նա ցանկանում էր այլ աշխատանքի անցնել (անորոշ դերանուն)։

Թիմարցուն չի կարելի քաղհանի ուղարկել, որովհետև նա կրուվում է քաղհանավոր կանանց հետ, այնինչ նրանից լավ ֆուրգոն բշտի չկա (ԱԲԾ, 290)։ Այստեղ այնինչ-ը շաղկապ է։

Այնինչ մարդը (անորոշ դերանուն)։

Այնինչ շաղկապը վերջերս է տարածվել գրական լեզվում և դեռ լայն տարածում չունի բանավոր խոսքում։ Որպես դերանուն շատ քիչ է գործածվում, որևէ անշուշտ պայմանավորված է նրա բառական արժեքով։

ՇԱՂԿԱՊԻ ՀԱՐԱԲԵՐԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ՑՈՒՑԱԿԱՆ ԴԵՐԱՆՈՒՆՆԵՐԻ ՀԵՏ

Նրբամյալ, այնքան և գրեթե միշտ նույնպես ցուցական դերանունները հանդես են գալիս կապակցական դերով։

Օրինակներ՝ «Կարծես քարերի տակից էին բուսել, այնպես առակրկալ էր նրանց հանդիպումը» (ԱԲԾ. 555)։ «Շահ յուրդի տախտերում ձին ձիավորով կկորչեր. այնքան խոտը բարձր էր...» (ԱԲԾ. 376)։ «Կարծես թե ծանոթ տարիներ չեն եկել ու անցել, այնքան թեթև ու հեշտին է օրը, այնքան լեցուն են ժամն ու վայրկյանը կյանքով» (ՀՔ, 489)։

Այս բարդ նախադասությունները չափազանց հետաքրքրական կառուցվածք ունեն։ Բավական է վերջադաս նախադասությունները դարձնել առաջադաս, իսկ վերջադաս դարձած նախադասություններից առաջ դնել ուր շաղկապը, և ահա առաջին օրինակի դեպքում մենք կստանանք ձևի պարագա երկրորդական նախադասություն, իսկ հաջորդ օրինակների դեպքում՝ չափի պարագա երկրորդական նախադասություն, ինչպես՝ «Այնպես անակնկալ էր նրանց հանդիպումը, որ կարծես քարերի տակից էին բուսել»։ «Այնքան խոտը բարձր է, որ Շահ յուրդի տախտերում ձին ձիավորով կկորչեր»։

«Այնքան թեթև ու հեշտին էր օրը, այնքան լեցուն են ժամն ու վայրկյանը, որ կարծես ծանոթ տարիներ չեն եկել ու անցել»:

Այստեղ շատ պարզ երևում է, թե ինչ մեծ դեր ունեն բարդ նախադասությունների արտահայտած բովանդակության տեսակետից նրանց բաղադրիչ մասերի շարադասությունը և շաղկապների գործածությունը:

Անժխտելի և այն փաստը, որ ցուցական հիշյալ դերանուններով կապակցվող այն նախադասություններում, որ մենք բերեցինք սկզբում, այնպես և այնքան բառերը իրենցով սկսվող երկրորդական նախադասություններին տալիս են յուրահատուկ պատճառական երանգ, Եվ քանի որ սովորաբար պատճառի հետ կապված է նաև հետևանքը, ապա հիշյալ նախադասություններում, այնքանով որ քանով որ երկրորդական նախադասությունների պատճառական երանգն էլ ուժեղ կերպով շեշտված չէ, գլխավորի հետևանքի երանգն էլ շեշտված կերպով հանդես չի գալիս, Հաճախ այնքան-ին ավելանում է որ շաղկապը¹, որով ավելի է շեշտվում նրա պատճառային երանգը: Օրինակ՝

Նա անմիջապես պառկեց քնելու, այնքան որ հոգնած էր:

Տարածվում են նաև ցուցական և հարաբերական դերանուններից հարադրված այնքան որքան, այնքանով որքանով որ ձևերը, որոնք արտահայտում են պատճառային հարաբերություններ՝ կապակցելով երկրորդական նախադասությունը գլխավորին:

Այնպես, այնքան ցուցական դերանունների պատճառային երանգով հանդես գալու հարցի պարզաբանման համար բերենք արդեն օգտագործված օրինակներից մեկը՝

Այնքան խոտը բարձր էր, որ Շահ յուրդի տախտերում ձին ձիավորով կկորչեր:

Այստեղ երկրորդական նախադասությունը չափի պարագա է՝ հետևանքի որոշ երանգով: Լրացուցիչ այդ երանգն էլ ահա ենթադրում է գլխավոր նախադասության այնպիսի մի իրողություն, փաստ, որը պատճառ հանդիսանար երկրորդական նախադասության այդ լրացուցիչ երանգի համար: Հենց գլխավոր նախադասության այդ հատկանիշն է (պատճառի անորոշ երանգի), որը ավելի շեշտված կերպով դրսևորվում է այդ նախադասությունները շրջելու և որ շաղկապը զեղչելու դեպքում, ինչպես՝

¹ Այդ նույն որ շաղկապը այնպես ցուցական դերանվան վրա ավելացնելիս տալիս ենք հետևանքի շաղկապ. այդ պատճառով տարածված չէ այնպես որ ձևը՝ պատճառի վերահիշյալ երանգը արտահայտելու համար:

Շահ յուրդի տախտերում ձին ձիավորով կկորչեր, այնքան խոտը բարձր էր¹։

Այսպիսով, հիշյալ դերանունների այս կիրառությունները մեղ հորոշ հիմք են տալիս պնդելու, որ նրանք վերջերս տարածված այս գործածություններով կանգնած են շաղկապ դառնալու ուղու վրա և չնայած դեռ լիովին չեն խղել կապը նյութական բովանդակություն և լեզու իրենց համարժեքներից (այնքան, այնպես ցուցական դերանուններից), բայց այսուհանդերձ դժվար է ընդունել, որ նրանք վերահիշյալ օրինակներում նախադասության անդամներ են։

Ուշագրավ է նաև այն հանգամանքը, որ այդ ցուցական դերանունները իրենց կապակցական կիրառություններում հանդես են գալիս հատկապես երրորդ դեմքով, որը, ինչպես գիտենք, ավելի վերացական բնույթ ունի, քան համապատասխան դերանունների I և II դեմքերը (այսպես, այդպես, այսքան, այդքան)։ Երրորդ դեմքի վերացական ու անորոշ բնույթի պատճառով է նաև, որ որպես շաղկապ հանդես են գալիս այնքան, այն է շաղկապները։ Երրորդ դեմքով է նաև նույնպես շաղկապը, որի դերանվանական գործածությունները խիստ հազվադեպ են, ինչպես՝

— Դատդ կտա հայոց ժողովուրդը, շինական, — նույնպես բարձրաձայն խոսեց Վարդանը (ԴՊՎ. 4, 236)։

Ամփոփելով ճշգրտագինների հարաբերակցությունը դերանունների հետ՝ բաժինը՝ հարկ էնք համարում նշել հետևյալը.

1. Դերանուններից հարաբերականները հարաբերակցում են շաղկապների հետ մասնակի կերպով, այսինքն կապակցական իրենց դերում հանդես են գալիս դերանվան և շաղկապի խոսքի մասային համատեղ արժեքներով։ Նրանք հարաբերակցում են շաղկապների հետ միայն շաբանյուսական կողմով՝ նախադասություններ կապակցելու կողմով. իսկ շաղկապի խոսքի մասային մյուս երկու հատկանիշների տեսակետից նրանք հեռու են նրանից, քանի որ ունեն նյութական բովանդակություն և թեքման ձևեր (իհարկե, ոչ բոլորը)։ Սակայն շարահյուսական տեսակետից էլ նրանք լրիվ չեն հարաբերակցում շաղկապների հետ, քանի որ երկրորդական նախադասության մեջ նրանք հանդես են գալիս որևէ պաշտոնով։ Դա պայմանավորված է նրանց նյութական բովանդակություն ունենալու հատկանիշով։ Այդ դերանուններից են ու հարաբերականը իր ուղիղ և թեք ձևերով, ուր, ուրեղ, այնքան... ուրեղ, այնչափ... ուրչափ և

¹ Այն, ինչ ասվեց այս օրինակի վերաբերյալ, պետք է ընդունել նաև մյուս երկուսի համար։

այլն: Սակայն, ինչպես արդեն նշել ենք, նրանց նյութական իմաստի վերացական և անորոշ լինելը նախադրյալներ է ստեղծում, որպեսզի որոշ դերանուններ իրենց հարաբերականի սովորական կիրառությամբ աստիճանաբար կորցնեն իրենց առանց այն էլ անորոշ իմաստը և հանդես դան զուտ շաղկապական դերով՝ այս կամ այն իմաստային հարաբերությամբ:

Լեզվի հարստացումը, զարգացումն ու կատարելագործումը հրամայաբար առաջ են քաշում բառերի ու նախադասությունների կապակցման նորանոր միջոցների օգտագործման հարցը: Եվ քանի որ հարաբերական բառերը օժտված են շաղկապի խոսքի մասային արժեքի ամենաէական հատկանիշով, այսինքն կապակցման շարահյուսական հատկանիշով, ապա պատահական չէ, որ այդ հարաբերական դերանուններից մի քանիսը հանդես են գալիս այդ երկու խոսքի մասերի զուգանք արժեքներով՝ լիակատար կերպով հարաբերակցելով շաղկապների հետ:

2. Զարգացման այս աստիճանին հասնելու համար ենթադրվում է նախապես համատեղ արժեքներով հանդես գալու որոշ շրջանի, երբ հետո հիշյալ կապակցական կիրառություններում դերանվան խոսքի մասային հատկանիշները իրենց տեղը զիջում են շաղկապի խոսքի մասային հատկանիշներին, որից հետո հարաբերական, ինչպես նաև մյուս դերանունները հանդես են գալիս արդեն որպես շաղկապներ՝ ձեռք բերելով այդ խոսքի մասին հատուկ իմաստային և ձևաբանական հատկանիշները: Այդպես է պատահել, օրինակ ռ, այլ, այնինչ դերանունների հետ, որոնք, չնայած նույնանիշ ռ, այլ, այնինչ դերանունների առկայությանը, չեն շփոթվում նրանց հետ և ունեն գործածության իրենց հատուկ ոլորտները: Իրողություն է նաև այն, որ լեզուն միշտ չէ, որ ձգտում է այդ նույնանուն խոսքի մասերից միմիայն մեկը պահել: Այդ պատճառով է ահա, որ խոսքի մասերի հարաբերակցությունը ընդհանրապես հատուկ է բոլոր լեզուներին:

Զուգահեռ արժեքների ունեցող ոչ բոլոր դերանուններն են սակայն, որ հասել են զարգացման այն աստիճանին, ինչ որ այլ-այնինչ, ռ շաղկապները: Երբեմն դժվար է լինում որոշել որոշ բառերի խոսքի մասային պատկանելությունը: Այդ տեսակետից մեր կողմից առաջադրված մի քանի միջոցները երբեք էլ սպառել չլուծում չեն կարող տալ հարցին: Սպառել չլուծում հնարավոր չէ տալ, քանի որ այդ բառերը, գտնվելով խոսքի մասերի փոխանցման դրության մեջ, դեռ չեն հաստատվել միմիայն այս կամ այն խոսքի մասային արժեքով հանդես գալու մեջ, Եվ պարտադիր էլ չէ, որ նման դրու-

թյան մեջ գտնվող բառերը վերջ ի վերջո անպայման հարեն շաղկապ-
ներին (ասում ենք շաղկապներին, քանի որ վերջիններս, որպես
նյութական իմաստից զուրկ բառեր, երբեք հակառակ պրոցեսի մեջ
չեն կարող գտնվել, այսինքն չեն կարող դառնալ դերանուն)։ Զէ՝ որ
լեզուն էլ, ստեղծելով հարաբերական բառերով կապակցման համա-
կարգ, անպայման կարիք ունի և կունենա կապակցման այնպիսի
նշանակի, երբ սերտ կերպով է տրվում գլխավորի և երկրորդականի
կապը, երբ շեշտվում է գլխավորի որևէ մի անդամը և այլն։

Արդի հայերենում շաղկապական և դերանվանական զուգահեռ
ւորման ունեցող բառերից են նաև ստորադասական հարաբերու-
թյուններ արտահայտող եւր, քանի, ինչքան(էլ), որքան(էլ), ինչպես
հարաբերական դերանունները, ինչպես նաև այնպես, այնքան ցու-
ցական դերանունները (միայնակ գործածությամբ՝ թույլ կերպով
շեշտված պատճառական իմաստով)։ Համադասական կապակցու-
թյուն ստեղծող ինչպես...այնպես էլ, ինչպես...այնպես և, ինչպես
նաև(և) շաղկապները էլ, և, նաև շաղկապներով հարադրվելիս ար-
վեն կորցնում են դերանվանական արժեքով հանդես գալու իրենց
հատկանիշը։ Սրանք բազմապատկում են արդի հայերենի շաղկա-
պական միջոցները՝ հարստացնելով դրանք իմաստային նորանոր
հարաբերություններով ու երանգներով։

ՀԱՄԱՌՈՏԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

- ԱՔԵ — Ակսել Բակունց, Երկեր, Երևան, 1955.
ԴԴ — Դերենիկ Դեմիրճյան, Ընտիր պատմվածքներ, Երևան, 1950.
ԴԴ, 4 — » » Երկերի ժողովածու, հատ. IV., Երևան, 1957.
ԵԶ — Եղիշե Զարենց, Ընտիր երկեր, Երևան, 1955.
ՀՀԵ — Հակոբ Հակոբյան, Երկեր, Երևան, 1951.
ՀՍ — Համո Սահյան, Բարձունքի վրա, Երևան, 1955.
ՀՔ — Հրաչյա Քոչար, Բարեկամություն, Երևան, 1950.
Մուր.— Մուրացան, Երկերի ժողովածու, հատ. III, Գևորգ Մարգարետունի,
Երևան, 1952.
Ն.-Դ.,— Նար-Դոս, Երկերի լիակատար ժողովածու, հատ. VII, Մահը, Երե-
վան, 1948.
ՆԶ — Նաիրի Զարյան, Հատընտիր, Երևան, 1951.
ՆՋՀ — Նաիրի Զարյան, Հացավան, Երևան, 1955.
Շիրվ.— Շիրվանզադե, Երկերի լիակատար ժողովածու, հատ. IV, Փառս,
Երևան, 1950.
Բաֆ.— Բաֆի, Երկերի ժողովածու, հատ. III, Սամվել, Երևան, 1950.
ՎՏ — Վահան Տերյան, Երկերի ժողովածու, հատ. I, Հայպետհրատ, 1950.
ԳԹ — Գրական թերթ.
ՍԳ — Սովետական գրականություն.
ՍՀ — Սովետական Հայաստան։

Г. ГАРЕГИНЯН

ПО ВОПРОСУ О СООТНОШЕНИИ СОЮЗА
И МЕСТОИМЕНИЯ В СОВРЕМЕННОМ
АРМЯНСКОМ ЯЗЫКЕ

Р е з ю м е

В настоящей статье рассматриваются случаи соотношений союзов к местоимениям в современном армянском языке. Наше исследование показывает, что соотношение бывает двух видов:

1. Частичное, при котором соотносящаяся часть речи, не утрачивая своей прежней принадлежности к данной части речи (а также синтаксического свойства как члена предложения, если оно полнозначное слово), выступает в совместном значении, соотносясь к союзу только по признаку связывания. Таковы относительные (*որ «что», որտեղ «где, куда», Ինչպես... ինչպես «так... как»*) и указательные (*այնպես «так», այնքան «столько»*) местоимения.

2. Полное, при котором в выполнении связующей роли соотносящаяся часть речи утрачивает прежнее значение части речи и выступает в параллельном значении, не создавая смысловой путаницы. Таковы например: *որ, նույնպես, այլ, այնքան*.

Иногда после длительного параллельного употребления некоторые слова доходят до такой степени развития, что употребляются только как союзы.

На основании соответствующих материалов в статье сделана попытка установить конкретные случаи указанных переходов. Необходимо также указать, что система союзов подвержена постоянному развитию и усовершенствованию, вследствие чего не всегда представляется возможным в точности установить принадлежность некоторых слов к той или другой части речи в их переходный период.